ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Երևան, 29 հունվարի 2020թ.

ԱՈՒՇՎԻՑ-ԲԻՐԿԵՆԱՈՒ ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ՃԱՄԲԱՐԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՎԱՐՏԻ 75-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ «ՀՈԼՈՔՈՍՏԻ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՇԱԲԱԹ» ՀԱՎԱՔԻՆ

Հարգելի բարեկամներ,
Հայաստանի հրեական համայնքի հարգելի ներկայացուցիչներ,
Հոլոքոստի հիշողության շաբաթի հարգելի մասնակիցներ,

Հոլոքոստի հիշողության շաբաթը, որը նվիրվում է Աուշվից-Բիրկենաու համակենտրոնացման ճամբարի ազատագրման և Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտի 75-ամյակին, և այդ շրջանակում այսօրվա միջոցառումը ոչ միայն հարգանքի տուրք է ողջակիզված հրեա ժողովրդին, այլև՝ նմանատիպ հանցագործությունների կանխարգելմանն ուղղված ևս մեկ հիշեցում-ազդանշան:

Հարգելով Հոլոքոստի զոհերի հիշատակը՝ մենք մեր համերաշխությունն ենք հայտնում հրեա ժողովրդին և վերահաստատում մեր վճռականությունը՝ չմոռանալ ցեղասպանության հանցագործությունների մասին, որտեղ էլ դրանք տեղի ունենան և թույլ չտալ, որ նման հանցագործությունները վերստին կրկնվեն, չմոռանալ զոհերի և վերապրածների տառապանքների մասին, ապահովել անվտանգ և բարեկեցիկ կյանք նրանց և նրանց ժառանգների համար, որտեղ էլ նրանք լինեն:

Հայերը և հրեաները կապված են պատմությամբ և ճակատագրով, վերապրելու և իրենց ինքնությունը պահպանելու կամքով: Որպես հալածված ժողովուրդ՝ մենք հասկանում և կիսում ենք Հոլոքոստի ողբերգության ցավը, մենք հիշում և աղոթում ենք Հոլոքոստի զոհերի համար այն նույն վշտով, ինչպես Հայոց ցեղասպանության զոհերի համար:

Այսօրվա Հայաստանի հողը, որ բազմիցս ասպատակվել, ձեռքից ձեռք է անցել և ավերվել դարերի ընթացքում, իր վրա պահել է հրեական հետքեր և դրոշմներ, որ ուշադիր աչքը կարող է նկատել շատ բաներում՝ մարդկանց սովորույթների ու վարքագծի մեջ, ճարտարապետական կոթողների վրա, սիմվոլներում, խոսքում...

Նոր ժամանակներում այդ հողն ընդունել է նոր հրեա ընտանիքների, որոնք Հայաստանը համարում են իրենց երկիրը և որոնք չլքեցին այն նույնիսկ վերջին տասնամյակների ամենածանր տարիներին:

Ես իմ համերաշխությունը, հարգանքն ու երախտագիտությունն եմ հայտնում Հայաստանի հրեական համայնքին, համայնքի յուրաքանչյուր անդամին, որոնք իրենց աշխատանքով և տաղանդով նպաստում են մեր երկրի զարգացմանը, հարստացնում նրա տնտեսությունը, գիտությունն ու մշակույթը:

Մենք երախտապարտ ենք աշխարհի բոլոր այն հրեաներին, որոնք արդեն մեկ դար մեզ հետ միասին պայքարում են ցեղասպանության՝ մարդկության հանդեպ այդ ծանր հանցագործության դեմ՝ այն խստորեն դատապարտելու և հետագայում նման հանցագործությունները կանխարգելելու նպատակով:

Քսենոֆոբիայի և քաղաքական ծայրահեղ արկածախնդրության զոհ գնացած իմ ազգը չափազանց զգայուն է դրա ամենաայլանդակ դրսևորումներից մեկի՝ հակասեմիտիզմի հանդեպ: Մենք տեսել ենք, թե ինչ համաշխարհային դժբախտության և աղետի է հանգեցնում այն: Մենք գիտենք, որ քաղաքական անհաջողակների վերջին ապաստանը դա է՝ մեղավորներ փնտրել «օտարների» մեջ: Այսօր ես հակասեմիտիզմի մեջ մտցնում եմ ոչ միայն էթնիկ հրեաներին, այլև իմ ազգին, որին գրեթե նույն պատճառներով 20-րդ դարասկզբին ոչնչացրին ֆաշիստների նախահայրերը և ուսուցիչները՝ երիտթուրքերը: Մի՞թե Հիտլերը չէր ասում 1939 թվականի օգոստոսին. «Ո՞վ է այսօր հիշում հայերի կոտորածները»:

Ուստի հակասեմիտիզմը, որպես քսենոֆոբիայի և ռասայական խտրականության դասական օրինակ, պետք է արմատախիլ արվի ամենուր իր բոլոր դրսևորումներով:

Նաև այդ պատճառով Հայաստանը 2013 թվականի մարտի 22-ին նախաձեռնեց ՄԱԿ-ում «Ցեղասպանությունների կանխարգելման դեմ» բանաձևը, որին միացան 62 պետություն: 2015 թվականի սեպտեմբերի 11-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 69-րդ նստաշրջանում միաձայն ընդունվեց Հայաստանի կողմից ներկայացված 69/323 բանաձևը, որով դեկտեմբերի 9-ը հռչակվեց Ցեղասպանության զոհերի հիշատակի և արժանապատվության և այդ հանցագործության կանխարգելման միջազգային օր:

Կարծում եմ, որ աշխարհի պետությունները և միջազգային հանրությունը առավել հետևողական և արդյունավետ քայլեր պետք է անեն դատապարտելու համար մարդկության դեմ գործված հանցագործությունները և կանխարգելելու համար նորերի կրկնությունը: Այդ պայքարը չպետք է տուրք տա քաղաքական կոնյունկտուրային և անցողիկ շահերին, այլ՝ պետք է ուղղված լինի մարդկության խաղաղ և համերաշխ ապագային:

Անցյալ շաբաթ ես Երուսաղեմում էի՝ մասնակցելու համար Յադ Վաշեմում Հոլոքոստի հիշատակին նվիրված «Հիշելով Հոլոքոստը, պայքարելով ընդդեմ հակասեմիտիզմի» 5-րդ միջազգային համաժողովին: Այդ ընթացքում ես հանդիպեցի Իսրայելի Պետության նախագահ Ռեուվեն Ռիվլինի հետ: Մենք համաձայն էինք, որ պետք է միասին պայքարենք ֆաշիզմի, ռասիզմի, ատելության, հակասեմիտիզմի բոլոր դրսևորումների դեմ:

Հայ ժողովուրդը վիթխարի կորուստներ է տվել՝ 1-ին համաշխարհային պատերազմի ընթացքում դառնալով քսենոֆոբիայի զոհ: Եթե այդ պատերազմի ընդհանուր զոհերի թիվը հաշվվում է 15 մլն, ապա դրանցից 10-ից 1-ը հայ էր, որի մասին չկա պատմության դասագրքերում և պատերազմի հաշվեմատյաններում:

Երկրորդ համաշխարհային պատերազմում այլ ազգերի հետ միասին նացիզմի դեմ մարտի ելան վեց հարյուր հազար հայեր, որոնցից երեք հարյուր հազարը զոհեցին իրենց կյանքը: Դա անհամաչափ մեծ թիվ է՝ հաշվի առնելով մեր նախորդ մարդկային կորուստները: Միաժամանակ դա ցույց է տալիս նաև մեր նշանակալից ավանդը մարդկության դեմ այդ չարիքի վերացման գործում:

Մենք սպասում ենք, որ միջազգային հանրությունը ըստ արժանվույն գնահատի դա: Մենք ակնկալում ենք հատկապես Իսրայելի պետության կողմից 1915 թվականի Հայոց ցեղասպանության ճիշտ գնահատականը: Երուսաղեմում ես իմ հրեա գործընկերներին ասացի, որ Իսրայելը պետք է առաջնային դեր ունենա և ճանաչի Հայոց ցեղասպանությունը՝ ընդգծելով, որ պատմության այս ամոթալի էջի ճանաչումն ու դատապարտումը չպետք է պայմանավորված լինի քաղաքական նպատակահարմարություններով:

Մեզ՝ հայերիս և հրեաների վրա պատմական առաքելություն և պատասխանատվություն է դրված. հավերժացնել մարդկության դեմ կատարված մեծագույն հանցագործությունների՝ Հայոց ցեղասպանության և Հոլոքոստի զոհերի հիշատակը և մարդկության մեջ մշտապես վառ պահել հիշողությունն այդ մասին՝ որպես դաս, որպես հիշեցում, որպես կանխարգելում:

Մեր հիշողությունից չպետք է անհետանա ոչ Աուշվից-Բիրկենաուի ողբերգությունը, ոչ էլ այն ազատագրողների հերոսությունը:

Ողջունում եմ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի այս նախաձեռնությունը և հաջողություն մաղթում հավաքին:

ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ